
II

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ «ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՅ ԵՐԳԻ» ՎԵՊԸ

ՀԱՍՄԻԿ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

«Կնահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, ըմբռնում բարոյական, սեր: Կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն: Եվ մենք դեռ կնահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ. մեղա, մեղա Արարատին»¹:

XX դ. 20-ական թվականների սփյուռքահայ գրականության մեջ շնորհիվ ֆրանսահայ երիտասարդ գրողների՝ Շահան Շահնուրի, Ջարեհ Որբունու, Հրաչ Ջարդարյանի, Նիկողոս Մարաֆյանի, Նշան Պեշկեթաշյանի և այլոց, ինչպես նաև ժամանակի հրամայականով ձևավորվեց գրական մի նոր ուղղություն՝ Նահանջի գրականությունը, որի համար հենք հանդիսացան «Մենք» գրական շարժումը և Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը: Հայ երիտասարդ գրողներն իրենց հայացքն ուղղեցին իրական կյանքին, որն օրավուր իր հորձանուտի մեջ էր առնում հայորդիներին, ակամա նրանց հեռացնում ազգային ավազանից: Նահանջի գրականությունը միտված էր նահանջի դեմն առնելու, սթափեցնելու օտար ավերում հաճող հայորդիներին, նրանց ետ բերելու ազգային ակունք: Շ. Շահնուրն իր վեպով առաջինն ահազանգեց նահանջը և դարձավ նահանջի գրականության դրոշակիրը: 1929 թ. նա հրատարակեց իր «Նահանջը առանց երգի կամ պատկերագրող պատմություն հայոց» վեպը: Այս խոստով վերնագրերը վեպը բացելու, խորքով ըմբռնելու բանալիներն են: Եթե առաջին վերնագրով Շահնուրը հուշում է վեպում պատկերվող ազգային նահանջը, ապա երկրորդ վերնագրով, ինչպես իրավագիտորեն նկատել է սփյուռքահայ գրականագետ Ժ. Դանիելյանը, «Շահնուր հայոց պատմությունը կու տա մեր ժամանակներուն չգերազանցված գեղարվեստական ոճով մը»²:

Վեպը՝ առաջին անգամ որպես թերթոն, մաս առ մաս լույս է տեսել Շավարշ Միսաքյանի «Հառաջ» թերթում (1929 թ., մայիս-սեպտեմբեր), ապա մեծ հայրենասեր Վ. Իսպիրյանի ծախսերով հրատարակվել է առանձին գրքով: Շ. Շահնուրն այն նվիրել է իր լավագույն բարեկամին՝ Հ. Տեր-Հակոբյանին³: Վեպը միանգամից ջերմ ընդունելություն է գտել: Դրվատական գրախոսականներով հանդես են եկել շատ ու շատ գրողներ ու քննադատներ: Այսպես, «Նահանջը, – գրում է Վ. Թեքեյանը, – որ իր առաջին գործն էր, բավական ընդարձակ վեպ մըն էր, որ խոստումներ չէր բե-

¹ Շ. Շ ա հ ն ու ը ը. Նահանջը առանց երգի, Երևան, 1991, էջ 151:

² Շահնուրյան ընթերցումներ, Բեյրութ, 1933, էջ 156-157:

³ Թ ո ը ո ս Թ ո թ ո լ և յ ա ն. Վերստին կարողալով Շահան Շահնուրը, Հայկա, 1971, էջ 15:

րեր միայն՝ այլ և առատ իրականացումներ: Արդեն իսկ իր ոճը ունեցող, դիտելու, զգալու և պատմելու ձիրքերով օժտված գրողի մը մեզի համար բարեբախտ հայտնություն էր ան՝ զոր խանդադատանքով ողջունեցին արտասահմանը, ինչպես Պոլիսն ալ իրենց գրեթե բոլոր հին ու նոր գրողներով և իրենց... այլևս սակավաթիվ գրասերներով, և զոր Խորհրդային Հայաստանը ըստ սովորության նկատեց իրեն համար խորթ, զայն չկարդաց ու կարդացողը անոր վերագրեց անձիշտ ձգտումներ՝ համաձայն իր կանխակալ կարծիքին...»⁴: Ուշագրավ է նաև Ա. Չոպանյանի գնահատականը. «Շահնուր բազմապատիկ հատկություններով օժտված տոհմիկ գրագետ մըն է, ունի ինքնուրույն դիտողության կարողություն, խոր զգայնություն՝ որ հաճախ նույնիսկ բուռն կդառնա, հոգեբանական բարդ վիճակներ թափանցելու և արտահայտելու ձիրք, տիպարներ գծելու, բնանկարներ, բարքերու պատկերներ, տրոփյուն կյանքով մը վերարտադրելու շնորհք, ունի սրամտություն, քնարերգություն, նկարչական տեսիլ, բյուրազան ու հանկուցիչ, քմայք մը և ոճ մը բազմաձև, իր բարդության մեջ միաձույլ, ճկուն, գունազեղ, անակնկալներով լեցուն, մեծապես ինքնատիպ, խորապես ու բնականորեն արդիական»⁵: Պակաս ուշագրավ չէ խստապահանջ Ն. Տեստեկյուլի գնահատականը. «Նահանջը» նորերուն մեջ եղավ առաջինը, վեպ մը, որուն միջոցով, չափազանցություն թող չըլլա, հայ գրականությունը նոր մուտք մը կգործե եվրոպական գրականության մեջ: Ան կբանա նոր շրջան մը ոչ միայն մեր վիպագրության, այլ նաև մեր ամբողջ գրականության համար»⁶: Եղան նաև մերժողական, իհիստ քննադատական արձագանքներ, օրինակ՝ Վ. Շուշանյանի «Մարդ մը, որ Արարատ չունի հոգվույն մեջ» (Բեյրութ, 1998), Գ. Մխիթարյանի «Քառորդ դար գրականության» (Կահիրե, 1946), որոնք, սակայն, չադարտեցին վեպի արժեքը:

«Նահանջը առանց երգի» վեպն իր արձագանքն ունեցավ նաև Խորհրդային Հայաստանում: Այն կուսակցական և դասակարգային դիրքից մեկնելով՝ անողորք քննադատության ենթարկեցին (Վ. Ալազան, Վ. Նորենց. «Նահանջը առանց երգի, թե՛ նահանջի երգը».- «Գրական դիրքերում», 1931, հ. 9-10, էջ 73-79), վեպի գեղարվեստական արժեքն աղավաղելու փորձ արվեց, սակայն եղան նաև վեպը բարձր գնահատողներ՝ ինչպես Չարենցը, Ա. Խանջյանը, Գ. Մահարին՝: «Ամեհի վեպը» դարձավ ոչ միայն սփյուռքահայերի, այլև արևելահայերի սիրված գիրքը: «Նահանջը առանց երգի» վեպը բռնել է ժամանակի քննությունը և այսօր էլ ունի արդիական հնչողություն: Շ. Շահնուրի վեպի մասին մեզանում և Սփյուռքում գրվել են և այսօր էլ գրվում են գրքեր, հոդվածներ: «Նահանջը» մեզ բազմադարյան գրականության մեջ այն բացառիկ ստեղծագործություններից է, որ միշտ նոր վերագնա-

⁴ «Ապագա», 11-13 հունվար, 1934, էջ 2:

⁵ «Անահիտ», 1930, Ա տարի, մարտ-ապրիլ, № 6, էջ 110:

⁶ «Հայրենիք», 1929, Ը տարի, դեկտեմբեր, № 2, էջ 132:

⁷ Գ. Մահարուն վեպը տվել է Չարենցը. «Վերցրո՛ւ, կարդա՛, ... Չուշացնես, մեծ վանեցուց եմ վերցրել»:- Մեծ վանեցին Խանջյանն էր, գիրքը՝ Շ. Շահնուրի «Նահանջը» (Գ. Մ ա հ ա թ ի. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1989, էջ 483):

հատումներ է պահանջում: Վեպի, թերևս, ամենաբարձրը Անդրանիկ Փոլատյանի տված գնահատականն է. «Նահանջը Առանց Երգին» Սփյուռքին Նարեկն է»⁸:

Վեպը Սփյուռքի արմատախիլ հայության պատմությունն է, Փարիզ ընկած «Արևելքի տղոց»՝ պոլսահայ երիտասարդների ողբերգական կյանքի պատմությունը: Շահնուրը միտումնավոր կերպով վեպի հերոսներ է դարձրել երիտասարդներին. նրանք՝ ոչ ուրիշներ, հեշտությամբ կարող են նոր բարքերի գոհր դառնալ, նոր կյանքի հրապույրները, հետաքրքրությունները, «ազատ» կյանքը հիմնովին կարող են փոխել նրանց կյանքի ընթացքը, շեղել ազգային ավանդներից: «Նահանջը առանց երգի» վեպը Սփյուռքի համանվագն է, ուր, ինչպես նկատել է Ա. Լ. Փոլատյանը, «...կան ծիծաղներ՝ արկածահար ու կիսակատար, երգիծանք՝ աչքերե արցունք ժայթքեցնող, սիրավեպ, պանդխտության ցավը վայելքի մեջ խեղդելու փորձ և դյուցազներգություն՝ ազգային ոգիի»⁹:

Վեպը բացվում է Ղուկասի Ավետարանից քաղված երկու հատվածներով. «Եւ ամենայն ժողովուրդքն որ եկեալ էին, եւ տեսանէին՝ զայն եւ զգործ, բախէին զկուրծս եւ դառնային» (Ղուկ. ԻԳ. 48) և «Եւ ասէ [Յիսուս] զնոսա. զի խոռվեալ էք եւ ընդէր խորհուրդք ելանեն ի սիրտս ձեր: Տեսէք զձեռս իմ եւ զոտս, զի ես նոյն եմ. շօշափեցէք զիս եւ տեսէք. զի ոգի՝ մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիսս տեսանէք զի ունիմ: Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռսն եւ զոտս» (Ղուկ. ԻԴ 38–40): Առաջին հայացքից թվում է, թե դրանք ոչ մի կապ չունեն վեպի նյութի հետ: Վեպի նախադուրը հանդիսացող բնաբաններով Շահնուրն ակնարկում է մահվան և հարության գաղափարները՝ դաժան եղեռներ, նրա թողած հոգևոր ու ֆիզիկական ավերածությունները և հայի հետագա ճակատագիրը, նրա մաքառումներն ու սայթաքումները: Ավետարանական բնաբանների ենթաիմաստը ճիշտ է բնորոշել սփյուռքահայ բանաստեղծ Ա. Դարյանը. «Նազովրեցի Յիսուսին օրինակով, Շահան Շահնուր, մեզ կը հրավիրէ տեսնելու իրականությունը՝ իր վերքերուն ընդմեջեն, որոնք մեր իսկ վերքերն են, և կ'ակնկալէ, որ անդրադառնանք անոնց գոյության ճշմարտության: Այս տեսանկյունեն՝ «Նահանջը» իր առաջին էջեն մինչև վերջին տողը մարտահրավեր մըն է, ուղղված մեր բոլոր Թովմասներուն, հայ կյանքի բոլոր կամավոր խուլերուն և կույրերուն՝ ճանչնալու, շոշափելու ճշմարտություն, ինչքան ալ դառն ըլլան անոնք»¹⁰:

Շահնուրը վեպը գրելիս դիմել է բազմապլանային դիպաշարի կառույցին՝ գրական հմտությամբ տալով սփյուռքահայ կյանքի ժամանակակից պատկերները, հասարակական և ազգային երևույթների նկատմամբ իր հստակ մոտեցումները:

Մյուսն կարծես վեց տարբեր ճյուղավորում ունի՝ Պետրոսի (Պիեր), Սուրենի, Հրաչի, Լոխումի, Լեսքյուռի և Նենեթի (մադամ Ժան) ընտանեկան, ընկերային միջավայրերն իրենց թե՛ ներքին, թե՛ արտաքին կյանքով: Վեց տարբեր մարդիկ՝ առանձնահատուկ ըմբռնումներով, բարոյական վարքագծով: Մյուսն էլ բազմաձայ բնույթը բխում է կյանքն ամբողջական կտրվածքով արտացոլելու ձգտումից:

⁸ Ա ն դ ր ա ն ի կ Լ. Փ ո լ ա տ յ ա ն. Շահան Շահնուր, Նյու Ջերսի, 2003, էջ 26:

⁹ Նույն տեղում, էջ 27:

¹⁰ Շահնուրյան ընթերցումներ, էջ 50:

Վեպը երեք մասից է բաղկացած, որոնք աստիճանաբար բացում են հերոսների հոգեկան աշխարհը, օգնում խորքով ըմբռնելու 20–30-ական թվականների ֆրանսահայ կյանքը՝ իր տարաբնույթ աշխարհով, ուժացման, օտարացման տանող ուղիով: Բուն գործողությունները ծավալվում են Պետրոսի շուրջ: Այս հիմնական սյուժետային գիծն աստիճանաբար իր մեջ է ներառում գործողությունների երկրորդական զարգացումներ: Վեպն ունի կուռ ամբողջական սյուժե, որի զարգացման հիմքում Շահնուրը որոշակի միտումով է դրել Պետրոսի և մադամ Ժանի սիրո պատմությունը: Գրողը վեպում մեծ ուշադրություն է դարձրել աշխատանքի խնդրին, առանց որի նրա սիրավեպը նպատակին չէր կարող ծառայել: Երկում հմտորեն սերը (սեռը) և աշխատանքը համակցված են: Աշխատանքը Շահնուրի համար նահանջը պատկերելու նախադրու է հանդիսացել: «Աշխատանքը և սեռը կը կապեն. կը հարակցեն երկու եզրերը իրարու, – հավաստում է ֆրանսահայ գրականագետ Գր. Պըլտյանը, – կը տանին հայր նոր աշխարհին, ֆրանսուհիին, օտարութեան... Սեռ և աշխատանք կը միանան իրարու այստեղ և կը կազմեն շրջանակ մը, որուն մեջ կըլլա մարդը»¹¹:

Այսպես՝ Պետրոսը պոլսեցուն հատուկ ճարպկությամբ կարողանում է վարժվել նոր միջավայրին, գտնել հոգեհարազատ զբաղմունք: Նա աշխատանքի է անցնում «Մեծ ծառուղիներ» անվանումը կրող լուսանկարչատանը, որը «նախապես բոզանցի նմանեցուցած էր, գայթակղած ու զարհուրած՝ կիներու այդ արտասովոր համարձակությունեն, լպրշությունեն, ներկեն, հագուստներեն»: Այստեղ՝ ճանաչված լուսանկարչի մոտ, մնում է երկու տարի, կատարելագործում իր արհեստը՝ «ստրվելով նրբություններ, պզտիկ խաղեր, որոնց շնորհիվ լուսանկարիչ մը կհավակնի արվեստագետ եղած ըլլալ»¹²: Նա կարճ ժամանակում ընտելանում է Փարիզի՝ իր համար այնքան անսովոր վարք ու բարքին. «Ամեն օր, և գրեթե ամբողջ օրը, մերկություններու հետ էր իր գործը: Բայց ալ աչքերը չբացավ, ձեռքերը չդողացին, ենթակային կրցավ պետք եղածին պես մոտենալ, ավերով բռնել զայն՝ անհրաժեշտ դիրքը տալու համար, և իզուր ցանկաց մեկը սիրել: Կուրծքերը, պորտերը, սրունքները շփոթվեցան իրարու հետ ու մտքին մեջ մնաց միայն կատարելության մի պատկերը ճարտար մազահարդարի մը հասցեով. Փարիզը անոր վրա ալ դրավ իր արտաքին վայելչության դրոշմը ու տարիները անցան, այդ կիներուն պես մերկ, անսեր»¹³: Պետրոսը, որի երակներում հոսում էր մաքուր և առողջ արյուն, աստիճանաբար տեղի է տալիս ազգային անաղարտ սովորույթներին, հաճախ տրվում է սեռային կրքերին: Դա են վկայում նրա օրագրային գրառումները: Աշխատանքը նրան ավելի է մերձեցնում փարիզյան բարքերին: Արդեն իր գործում հմտացած Պետրոսը Լեսքյուտի հրավերով աշխատանքի է անցնում լուսանկարչական մի նոր արհեստանոցում, որտեղ էլ նա հային հատուկ անկեղծությամբ սիրահարվում է մադամ Ժանին: Սեռի հրապույրը տարագիր հայ երիտասարդներին ուղիղ ճանապարհով տանում է դեպի կրկնակի օտարում, արագացնում է ազգային ավազանից

¹¹ Գր. Պըլտյան, Տրամ, Պեյրու, 1980, էջ 330:

¹² Շ. Շահնուր, Նահանջը առանց երգի (այսուհետև՝ Շ. Շահնուր), Երևան, 1994, էջ 37:

¹³ Նուն տեղում, էջ 35:

հեռացումը: Օտար հողում ազգային դիմագծից հեռացումն առաջին հերթին սկսվում, ապա շարունակվում է «ազատ» բարքերին տրվելով, հրապուրանքներով ու գայթակղություններով: Միանգամայն ճիշտ է նկատվել, որ «Շահնուրը ողջ վեպի միջով անց է կացնում գերագույն մի միտք՝ օտար սերը ազգային առումով նույնքան այլասերող է, որքան օտար լեզվի օգտագործումը, բաներ, որոնք սակայն որպես անխուսափելի պարտադրանք կախված են հող ու հայրենիք կորցրած սերունդների գլխին»¹⁴: Շահնուրը սիրո խնդիրը վեպում ինքնանպատակ չի ներկայացնում: Նրա սիրային այս վեպն ունի «ազգայնական ուղղություն»: Շ. Շահնուրի վեպի սիրային-սեռային ամեն մի հարաբերություն՝ Պետրոս-Լիզ-Նենեթ, Սյուզան, Գաբրիելա և ուրիշներ, փաստում է հայերի արագընթաց օտարացումը:

Շահան Շահնուրը նահանջի առաջին ազդակը համարում է սեռը, և նրա վեպը ոչ այլ ինչ է, եթե ոչ սեռի վերհանում և քննում: Սեռի հարցերը 20-30-ական թվականներին սփյուռքահայ գրողների ստեղծագործություններում դիտվում են որպես ազգային-ավանդականից նահանջի «նախադուռ»:

Պետրոսն ինչքան էլ անհատականացված լինի, մնում է տիպական կերպար. նա այն հայն է, որ ընդդիմանալով ուժացման ռեալ վտանգին, չի կարողանում սահմանազատվել նահանջի հետապնդումներից, արարքներն ավելի են մխրճում իրեն օտարության ճահիճը: Պետրոսի անցած ճանապարհը համընդհանուր է. այդպես շարժվում է մի ամբողջ սերունդ: Ճիշտ է, Պետրոսը կանխատեսող չէ, «շարքային» ֆրանսահայ է, սակայն գրողը վճռում է նրա մեջ օտար կյանքի ռսպնյակով բեկել ազգային տազնապները և նրա միջոցով ցույց տալ հայամնա ու հայակորույս վիճակները:

Պետրոսի և Նենեթի սիրո հարաբերություններով, որոնց հիմքում ընկած է երկու ազգերի՝ հայերի և ֆրանսիացիների, Արևելքի և Արևմուտքի սիրո հանդեպ ունեցած գաղափարների բախումը, ըմբռնումների տարբերությունը, Շահնուրը վարպետ գրչով տվել է նահանջի պատկերը: Վեպում հայր՝ արևելցին, ներկայացված է Պետրոսի միջոցով: Նա սիրո մեջ հայ է, անշահախնդիր: Միրում է անկեղծ, անվերապահ, սրտի ամբողջ քուրայով: Պետրոսն իր ողջ էությունը պատրաստ է անմնացորդ նվիրվել իր սիրած էակին՝ Նենեթին: Հայի համար սերը հոգեկան ապրում է, ներաշխարհի արև: Այդ սերն է, որ վաղ թե ուշ կործանելու է Պետրոսին: «Այդ սերը, – իրավացիորեն գրում է Ա. Եղիազարյանը, – Փարիզի պայմաններում ծուղակ է Պետրոսի համար, որովհետև դա նրան քաշում է դեպի փարիզյան ճահիճը, սեռի ու վայելքների ազդություն չճանաչող աշխարհը, հենց այն Լեսքյուտի աշխարհը, որ այնքան արգահատելի էր Պետրոսի համար»¹⁵: Ֆրանսիացին՝ Արևմուտքը, ներկայացված է Նենեթի միջոցով, որի սերն՝ առօրյա, ընթացիկ, խաբող, հաշիվների ենթակա, սեր է, որ կարող է շատերին տրվել և վերածվել անասնական կրքի: Ավելին՝ սիրելով Պետրոսին՝ չի դադարում ուրիշներ լինել, վարում է բոհեմական կյանք, նա լուսանկարների բնորդուհի է, և դեռ սա ամենը չէ. նա ունի զավակ, որին երբեք մայրություն չի արել: Հայ մարդու համար, թերևս, այս վերջինն արդա-

¹⁴ Ա. Ա վ ա գ յ ա ն. Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Երևան, 2004, էջ 77:

¹⁵ Ա. Ե դ ի ա գ ա ր յ ա ն. Հայոց նորագույն գրականություն, Երևան, 2004, էջ 165:

րացում չէր կարող ունենալ: Մակայն Պետրոսը, արհամարհելով ամեն ինչ, անմնացորդ սիրում է նրան: Ըստ Շահնուրի, այս սերունդը նման չէ իր ավանդապահ նախնիներին, ունի միանգամայն տարբեր մտածելակերպ, իրերին նայում է այլ տեսանկյունով, շատ շուտ սիրահարվում է և գտնվում տնական ազդեցության տակ, ամենից ավելի տրվում է սրտի թելադրանքին, քան մտքի: Եվ սա է պատճառը, որ կամա թե ակամա բռնում է նահանջի ուղին: Ահավասիկ, սերը նահանջի բազում ուղիներից մեկն է, որի վրա էլ իր լուսարձակն է ուղղել Շահնուրը: Հետաքրքիր է, որ գրողը որպես հերոսուհի ընտրել է ոչ թե Փթիթ Լիզին, Թերեզին, Գարիին կամ Գիին, այլ՝ Նենեթին: Դա ունի իր բացատրությունը. թե՛ Պետրոսը և թե՛ Նենեթը դատապարտված են միայնության, նրանք ճակատագրից հալածվածներ են և փորձում են միմյանց մեջ փրկություն գտնել: Մեկին դժբախտ է դարձրել ազգային աղետը, հայահալած քաղաքականությունը, անհայրենիք մնալու տխուր փաստը, մյուսին՝ այլասերված, փողի վրա հենված իրականությունը: Պետրոսն անում է ամեն ինչ՝ երջանկացնելու նրան. անտեսում է Նենեթի անցյալի հետ կապված տխուր փաստերը. անմնացորդ սիրում է իր Ժանին, իսկ սիրող սիրտն ընդունակ է ամեն զոհողության. իր առջև կանգնած է դժբախտ մի կին, որ անչափ գեղեցիկ է և ունի սիրվելու իրավունք. մի թե մեղավոր է, որ դարձել է կյանքի քմահաճույքի զոհը: Պետրոսը գիտի, որ դժվար է լինելու Նենեթին իր անցյալից կտրելը, նամանավանդ, որ վերջինս շարունակում է կապը իր կյանքը խորտակած, իրեն շահագործած Լեսքյուռի հետ, ավելին՝ փորձում է հայրություն անել Նենեթի որդուն՝ Բիրիին: Թվում է՝ Պետրոսը ուժեղ անձնավորություն է, բայց իրականում այդպես չէ, հաճախ երկվորյուններ է ունենում. հիասթափության պահերին հեռանում է Նենեթից, հոգու հանգիստը փորձում գտնել ազգային միջավայրում՝ իր ընկերների շրջապատում, որն այլևս նախկինը չէ. ընկերներից ամեն մեկը յուրովի հեռացել էր ազգային ակունքից. օտարությունը մերժող Հրաչը անդառնալիորեն փոխվել էր. մերկ կնոջ պատկերը ձեռքին ցինիկաբար կրկնում էր. «Հա-յաս-տա-նի պատ-կերն է. բան մը տվեք, նա--յե-ցեք: Հա-յաս-տա-նի պատ-կերն է. բան մը տվեք, նա--յե-ցեք...»¹⁶: Նա շուտով ամուսնանում է կանադացի մի ուսանողի հոմանուհու՝ Սյուզանի հետ, և սա ունի իր բացատրությունը, իր «արդարացումը». «...հայուհին իր հիշողությանը կներկայանա երկու հաստ սրունքով և քիչ մը պեխով»: Հրաչը ընդունում է օտարի սովորույթները՝ մոռանալով ծնողներին, մոռանալով այն ամենը, ինչն ազգային էր. հարսանեկան արարողությանն անգամ ներկա չէին ծնողները, հավանաբար նույնիսկ տեղյակ չէին: Նա այլևս նախին ավանդապահ հայր չէր, որ մերժում էր օտարի հետ ամուսնությունը, ավելին՝ իր զավակին ֆրանսիական անունով էր կոչել՝ Ըրնե: Ընկերներից Միսաքը, որ «...օրապահիկը շահելով հանդերձ հետևեցավ մեծ զոհաբերություններով աստամնաբուժական վարժարանի դասընթացքին ու կրցավ վերջապես վկայականը շահիլ»¹⁷, մեկնում է Մարսել՝ հորեղբոր մոտ՝ կոշկակարություն անելու:

¹⁶ Շ. Շ ա հ ն ու Ր, էջ 133:

¹⁷ Նույն տեղում, էջ 125:

Նոր կյանքը, նոր միջավայրը հայ երիտասարդների հոգում խոր հիասթափություն է առաջացրել, հիմք հանդիսացել հոռետես մտքերի, որոնց մեջ կա և՛ դառը ճշմարտություն, և՛ որոշ չափով հայի կարգավիճակի չափազանցվածություն: Սուրենը, արհամարհելով հայ մտավորականի կեղծ բարեպաշտությունը, խիստ քննադատության է ենթարկում հայ ժողովրդի անխոհեմ, էսասեր, փառասեր վարքագիծը, որը դարեր շարունակ եղել է հայի կործանման, դժբախտության պատճառը: «Որքան որ մտածումս էտն տանիս, – ասում է Սուրենը, – հայերը կտեսնեն միշտ այնպես, ինչպես որ են այսօր: Պզտիկ, գաճաճ, տխեղծ: Յուրաքանչյուրը անդիմադրելի պաշտամունքը ունի իր կաշիին, իր մորթին»¹⁸:

Սուրենն այն հայն է, որ չի վախենում ճշմարտությունն ասելուց, և ինչո՞ւ վախենա, ի՞նչ ունի կորցնելու, բացի առողջ դատելուց և լեզվից, որը ևս անդառնալիորեն կորցնելու է. գրեթե ամեն ինչ արդեն կորցրել է՝ հայրենիք, հարազատներ. իրերն իրենց անունով է կոչում: Սուրենը իրավացիորեն հայի դժբախտության պատճառը ուրիշների նման չի փնտրում այլադավան, այլազգի մարդկանց մեջ, այլ տեսնում է իր ազգի մեջ, որը, անխոհեմաբար չկարողացավ դասեր քաղել պատմությունից: Խորենացու հետևողությամբ Շահնուրը խոսում է մեր հայ իշխանների և թագավորների մասին ու խիստ քննադատում նրանց անիմաստասեր բարքերը, որոնց պատճառով էլ հայ ժողովուրդը դարեր շարունակ տառապել է ու հալածվել: «Մեր այն թագավորը, – ասում է Սուրենը, – որ կկոչվեր Աբգար, Գագիկ կամ Խոսրով, հավաքեց իր երկրին այն բոլոր անձերը, որոնց համար կրսեին թե խելացի են, իմաստուն պայծառատես և լուսամիտ: Հավաքեց բոլորն ալ ու ջարդեց»¹⁹: Սուրենը պարզորոշ գիտակցում է, որ ազգային հին ու նոր առաջնորդների անծին ու անպտուղ վարքը հանգեցրել է մի տխուր իրավիճակի. իրենք, որ կոչվում են նոր սերունդ, մոռացության են մատնում ոչ միայն անցյալի արժեքներն ու գոհողությունները, այլև վշտի իրենց զգացողությունը, ինչը կարևորագույն ազդակներից է. «Դուն, հայ լակոտ, դու ամենեն շուտը կփոխվիս անասունի, եթե օր մը իսկ մնաս առանց վիշտի»²⁰:

Սուրենը հայի առաջին դժբախտության պատճառներից մեկն էլ տեսնում է կրոնի մեջ և փորձում է դուրս գալ դրա դեմ՝ իր սուրն ուղղելով Նարեկացու «Մատյանին»․ «Հայերը գիրք մը ունին: Անոնց ամենագեշ, զգվելի, ամենասխալ, վատառողջ և ամենեն ավելի անբարոյական գիրքն է ան – Նարեկը: ...Ոչ մեկ սերունդ, չտրիեցավ զայն ջնջել, որովհետև անոր լեզվական և բանաստեղծական ինչ ինչ հատկություններեն խարվելով ծածկված թույնը չնշմարեց: Ընդհակառակը փոխանցուցին որդիե որդի, արյունե արյուն, ու ան եկավ մինչև մեզ: Թունավորվեցանք, ազգովին թունավորվեցանք: Ահա թե ինչու պարտված ենք: Պարտվածներ ենք, որովհետև այն վանականին հաշմանդամ հոգիին պես արհամարհեցինք և անգիտացանք գոյությունը մեր եսին, մեր ուժին, կամքին, անհատականության, – չկովեցանք, չխածինք, չմաքառեցանք: Քրիստոնեական վարդապետության անոր սխալ

¹⁸ Նույն տեղում, էջ 130:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 132:

ու թերի մեկնությունը ընդունելով եղանք անմտորեն կրավորական, համակերպվող, աղերսարկու, անգիտակից»²¹: Շահնուրը «Նարեկին» վերագրում է մեծ դեր, այն դարեր շարունակ հայի համար եղել է Աստվածաշունչ, դարեր շարունակ ազդել է հայ մարդու ոգու և անհատականության վրա՝ նրան դարձնելով կրավորական, համբերատար, հանդուրժող, նրա մեջ խեղդելով ազատատենչ ոգին: Նարեկացու խիստ քննադատությամբ երևում է Սուրենի ոչ միայն կրոնի նկատմամբ ունեցած հակակրանքը, այլև՝ նրա ժխտողական վերաբերմունքը մեր անցյալ պատմության, մշակույթի հանդեպ: Անցյալը Շահնուրի համար անողոք քննության նյութ է եղել, որն էլ ժամանակին խիստ դժգոհության տեղիք է տվել: Հատկապես նշելի է Վ. Շուշանյանի «Մարդ մը որ Արարատ չունի իր հոգվույն խորը» գիրքը, ուր սուր քննադատության է ենթարկել Շ. Շահնուրին: Անցած տասնամյակների հայոց պատմությունը և ճակատագիրն այլ տեսանկյունով ընկալող Շուշանյանը, բնական է, որ պետք է մերժողական դիրք բռնեք ոչ միայն Շահնուր գրող անձի նկատմամբ՝ հերքելով նրա հայացքները, այլև՝ նրա գրականության նկատմամբ՝ ծայրահեղ մոտեցումով քննելով «Պատկերագարդ պատմություն հայոց» վեպը: Շուշանյանը փորձեց անարգանքի սյունին գամել Շահնուրին, սակայն Շահնուրի իրատեսական հայացքները ժամանակին իրենց դրական դերն ունեցան՝ գրողին հետ պահելով աչառու խիստ քննադատական մոտեցումներից: Սուրենի երկարաշունչ մենախոսություններից ուշագրավ է այս մեկը, որն ավելի է ընդգծում հերոս-գրողի՝ անցյալի մշակույթի նկատմամբ ունեցած ժխտական վերաբերմունքը: «Հայր ունի լավ նկարիչներ, – խորհում է Սուրենը, – բայց ոչ նկարչություն: Հայր ունի լավ դերասաններ, բայց ոչ թատերգություն, հոգնիլ չգիտցող ճամփորդներ՝ բնավ նավապետ: Հայր ունի գմայլելի բանաստեղծներ, բայց ոչ գրականություն. Աստվածներ, ոչ դիցաբանություն...»²²: Սուրենը Շահնուրի գաղափարակիրն է, նրա միջոցով վերջինս փորձում է ամրակայել իր մտքերն ու տեսակետները, որոնք մեզ արդեն հայտնի էին «Մենքից»: «Մենք ձեզ կպաշտպանենք, – գրում է Շահնուրը իր և իր գաղափարակից ընկերների անունից, – քանի որ կկրենք միշտ առկայծ կանթեղը, միշտ դուք չեք պաշտպաներ մեզ ետևեն եկող թշնամիին դեմ, որ է ձեր անցյալը: Լեզունիդ կչորնա, մի ուրանաք: Դուք որ պատասխանատվություն մը ունիք հայկական քայքայումի մեջ: Միայնք գործեցիք: Եվ հիմա կուզեք մեզի փոխանցել ձեր սխալները, այսինքն անմիաբանությունը, կուսակցական, ոճրային և դոնբաս վեճերը, լրագրությունը (կազեթաճիությունը), թուլամորթությունը, անպատասխանատվությունը, բառախաղը, սիրունը, չնչազարդը... Արտաքին թշնամիներե ավելի կփնտրենք ներքին թշնամիները: Կրկենք ներքին թշնամիներու դեմ: Դուք մեզ բոլորովին տարբեր տեղ մը առաջնորդեցիք: Անվերջ հայիոյեցիք թուրքին... Մենք կխորհինք, որ եթե երբեք մենք պարտվեցանք, որովհետև «անգլիական գրավորները չէին կրնար Արարատը ելնել», պարտվեցանք նաև անոր համար, որ մենք չէինք կրնար մեր մեջը իջնել: Այդ իսկ պատճառով սկսած է ինքնաճանաչման շրջան մը: Կուզենք ճանչնալ մեր կարողությունները, մեր արժանիքներն ու

²¹ Նույն տեղում, էջ 148:

²² Նույն տեղում, էջ 126:

թերությունները: Կկովինք այդ թերություններուն դեմ: Կպոռանք ցնցելուն համար: Մեր այս ճիշդ ձեզ կգայթակդեցնե, որովհետև դուք միայն արտաքին թշնամիին դեմ պոռալ վարժված էիք: Դուք չէիք հակազդեր ժողովրդին, այլ կհետևեիք անոր, քանի որ պլատֆորմ չունիք»²³: Սուրեն-Շահնուրը ժխտում է ազգային սրբությունները, քննադատում հներին, բացահայտում նրանց սխալները և մերժողական դիրք բռնում նրանց հանդեպ: Այստեղ զուգահեռվում են Շահնուրի և Չարենցի հայացքները: Երկուսն էլ, ելնելով իրենց արյունոտված, բզկտված ժողովրդի ճակատագրից, ինքնաքննադատաբար էին մոտենում իրենց անցյալին. «...մեր ակնարկը դարձնենք դեպի ներս, և սկսի հաշվեկշիռը», ավելին՝ ձգտում էին մատնացույց անել ազգային մտածողության և հոգեբանության օբյեկտիվ գոյություն ունեցող գծերը: Չնայած հայացքների նմանությանը՝ Չարենցն ուներ գրականությունը վերակերտելու իր տարբերակը, որը, ավաղ, բացակայում է Սուրեն-Շահնուրի մոտ, նա չունի գրականությունը փրկելու և ոչ մի ծրագիր, նրա համար անորոշ և անհեռանկարային է սփյուռքահայ գրողի ուղին: Նա հստակ գիտակցում է, որ իրենք նահանջում են, ձուլվում և վաղ թե ուշ դադարելու են հայ լինելուց: Սուրենը չի ցանկանում այլևս հայերեն գրել. ու՛մ համար գրել, երբ կարդացող չկա, երբ իր գրածը լինելու է սոսկ ձայն բարբառո հանապատի, երբ իրեն չեն ճանաչելու որպես գրող, երբ իր գրածը միայն մարդկային նեղ շրջանակների համար է լինելու և իրեն փառք երբեք չի բերելու: «Ամեն գրագետ սնապարծ է և հավակնոտ: Միայն թե ամեն գրագետ չի խոստովանի: Իսկ ես կրսեմ բարձրաձայն, որովհետև մտածումս թերակար չունի: Ես ույժ մըն եմ-գոնե այդ հավատքը ունիմ-ույժ մը, որ կուզե գործել: Մեր մեջ գետին չկա. շարժում չկա. գործունեության դաշտ չկա: ...Պետք է որ ապրիմ և երիտասարդի ավյունս արժեցնեմ: Հույսերով կարելի չէ զիս օրորել, տեսա ինձմե առաջ եկող հայերը, որոնք միշտ սպասեցին լավագույն օրերու և այդ հույսով ձերացան: Իմ արվեստս չուզեր սպասել ոչ մեկ վաղորդայնի: Չեմ ուզեր ամբաստանել հայր, բայց ան ալ զիս ամբաստանելու իրավունք չունի: Կուզեմ խոսիլ, և բնական է, որ խոսքս կուղղեմ անոնց, որոնք լսելու ատեն և փափագ ունին...»²⁴: Թվում է՝ Սուրենը անհայրենասեր մեկն է, սակայն իրականում նա մեծ հայրենասեր է, խորը ցավով է խոսում իր ազգի մասին, նրան վիշտ է պատճառում իրենց այս նոր նախճիրը, որ կոչվում է մեկ այլ բառով՝ նահանջ: Սուրենը գրողի գաղափարակիրն է: Նրա միջոցով է Շահնուրն արտահայտել իր մտքերն ու դիտարկումները: Վեպում Սուրենին տեսնում ենք երկու անգամ, երկու անգամ էլ նա հանդես է գալիս որպես գաղափարախոս: Թվում է՝ Սուրենը երբեք չի նահանջելու, բայց իր ընկերների նման նահանջում է, միայն թե այլ կերպ: Նա սկսում է ստեղծագործել ֆրանսերեն լեզվով, դա դեռ ոչինչ, ցավալին այն է, որ իր ստեղծագործություններում ազգային թեմատիկան նույնիսկ չի շոշափվում: «Գրածներդ ոչ մեկ հայու կրնան խոսիլ, – մտահոգված ասում է Պետրոսը՝ ցանկանալով նրան դարձի բե-

²³ Շ. Շ ա հ ն ու թ. Երկեր, հ. 2, Երևան, 1985, էջ 49-54: «Մենք» գրական խմբակը իր մանիֆեստով, իր առաջ քաշած հարցերով ու խնդիրներով կարծես «Երեքի դեկլարացիայի» սփյուռքահայ տարբերակը լինի:

²⁴ Նույն տեղում, էջ 196:

րել,– որքան աստեն, որ անունց մեջ «կարոտ» բառը չկա... Այո՛, մի խնդար, որովհետև միայն այդ չէ, որ թերի է. դու արդեն գիտես, բայց թող որ հիշեցնես, թե ֆրանսերենը գոյություն չունի նաև «մայր» բառին, «հայ» բառին, «աքսոր» բառին.– ֆրանսերենը չկա մեր «գաղթականին», մեր «որբին»...»²⁵: Նահանջը, սակայն, իր ամենակույ հորձանքի մեջ էր առել Սուրենին, և այլևս դարձի ճանապարհ չկար:

Պետրոսը ցավագին է ընդունում Սուրենի նահանջը՝ չգիտակցելով, որ ինքն էլ մեկն է այդ նահանջողներից. Նենեթի հետ ամուսնությունն արդեն իսկ նահանջ էր, էլ չենք ասում օրագրի մեջ օրավուր ավելացող ֆրանսերեն գրառումները: Ի վերջո, Պետրոսը, որ համառորեն դեմ էր նահանջին, չտեսնելով պայքարի ուղի, գալիս է տխուր մի համոզման. նահանջը անխուսափելի է. «Եվ կկրկներ Սուրենին խոսքերը. «պիտի ձուլվինք, բոլորս ալ պիտի ձուլվինք, դարման չկա ասոր...»²⁶: Շահնուրը հաճախ իր հերոսի հոգեկան դժվարին պահերին ոգեկոչման փորձեր է կատարում՝ քաջ գիտակցելով, որ մարդը հենց այս դժվարին պահերին կարող է ինքնագիտակցման գալ, ետ դառնալ իր զարտուղի ճանապարհից: Գրողը իր փրկության ուսպնյակը միտումնավոր ուղղում է հատկապես հերոսի համար անչափ հոգեհարազատ, սրտամոտ իրերի վրա՝ մոր նամակները, մոր ձեռքով կարված քեսեն, սակայն նորն այնքան հզոր է, որ դրանց գոյությունն անգամ անկարող են հերոսին դարձի բերել, նորն այնքան հզոր է, որ հերոսին իր շրջապատույտի մեջ է առել և դարձի ճանապարհ գրեթե չի թողել: Այդ տխուր փաստն է հավաստում վեպում երբեմն-երբեմն հնչող ջութակի «հին, շատ հին մեղեդի մը բոլորին ծանոթ, որ մինչև հոս կելլեր անհավասար ալիքներով, տատանելով, համենալով հարկերուն մեջտեղ, որ կուզեր ավելի երկրորդինը հուզել, քան չորրորդ հարկինը, որ ալ պարտասած երբեմն կկառչեր ջուրի խողովակներուն, բայց որ կելլեր, բայց որ կելլեր մինչև հոս, այդ հին, շատ հին մեղեդին, բոլորին ծանոթ»²⁷: Պետրոսը Նենեթի մահից հետո միայն «Հայր մերն» արտասանելիս է հասկանում, որ ինքն էլ է նահանջել. «Չեմ հիշեր կոր, Կոստան, մեղքցի ինձի, ես իմ «Հայր մերս» չեմ հիշեր կոր... Ան աստեն ֆրանսերեն սկսավ արտասանիլ իր թավ ձայնով, և հայր խոսքերը կրկնեց, շունչ առ շունչ»²⁸: Պետրոսի համար դա մեծ հարված էր: Պետրոսի անցած ճանապարհը լի է մեծ փորձություններով, որոնք նրան սովորեցնում են ապրել ու տոկալ և այլևս չընկղմվել օտարոտի բարքերի մեջ: Վեպի ավարտը մեզ հուշում է, որ Պետրոսը վերադառնալու է իր ազգային ավանդներին, և նրա ճանապարհը իր ճիշտ ուղուց երբեք չի բեկվելու. «Դանդաղորեն, դանդաղորեն, մութեն անջատվեցավ մեծ խաչը մեկ պատուհանին, և արշալույսը սկսավ լաջվարդ, թերևս կապտորակ, թերևս - վարդագույն:

Հեռավոր, չարաշուք հաչոցներ, աքաղաղի խուլ կանչեր, մսկոտ սոսափյունը պարտեզներու, թախճոտ սայլեր հարավի:

²⁵ Շ. Շ ա հ ն ու ը, էջ 197:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում, էջ 113:

²⁸ Նույն տեղում, էջ 212:

Առավոտյան սյուքով, արշալույսով, վարդով լի բաց պատուհանին վարագույրը սկսավ ուռիլ, մեկնելու պատրաստ առագաստի մը պես, փշրվելու պատրաստ ալիքի մը պես, որպես երագ մը անանուն»²⁹:

Վեպում բոլորը նահանջում են, չի նահանջում միայն Լոխումը (Զարեհ): Ո՞վ է նա. քահանայի որդի, Պոլսի Պերպերյան վարժարանի նախկին սան: «Անունը Յարություն Մարտիրոսյան էր,– վկայում է նրա դասընկեր Օննիկ Գոչունյանը,– մենք Լոխում մկրտեր էինք զինք դասարանին ամենն անույշ, ամենն կակուղ և ամենն սեմփաթիք տղան ըլլալուն: Աչքերը հաղորդականություն ունեին, որոնցմե բխող անկեղծ ժպիտը մեր զգացումները իրեն կ'առինքներ: Մազերը միշտ խուզված, ուսին մեկը վար, մեկը՝ վեր. դասարան կը մտներ արագաշարժ, ասդին-անդին ժպիտներ բաժանելով: Հեզասահ գետ մըն էր, բայց խորքին մեջ փոթորիկ, այդ հանդարտ, հեզաբարո նկարագրին մեջ, անթեղված էր հեղափոխական հոգի մը. երբեմն մեկեն կը բռնկեր, թները օդին մեջ կը սկսեր պոռալ, պոռչտալ... Օր մը այդ կենսունակ, բողբոջուն, աղվոր տղաքը հրաբխային ժայթքով լավայի մը հանգույն. հոսեցան դեպի Փարիզ: Շահնուրը, Լոխումը, Ճիզմեճյանը, Որբունին, Փարիզի այդ հեղձուցիչ մթնոլորտին մեջ. սկսան ծլարձակիլ՝ կերտելով մեր հետպատերազմյան գրականության շքեղանքը... Լոխումները բան մը չարտադրեցին, բայց իրենց փարիզյան կյանքով, սնունդ տվին Շահնուրյան գրականության բողբոջումին ու ուռճացման: Ամենն ալ լավ տղաք էին Շահանի շունչով ու Պերպերյանի ոգիով օծուն»³⁰:

Լոխումը փորձում է մնալ հայ, ավելին՝ յուրայինների մեջ ձգտում է արթնացնել հայի ոգին, որը դարեր շարունակ նրան ուժ ու եռանդ է տվել ապրելու, մաքառելու և, իր ազգային ինքնությունը պահպանելու: Նա հաճախ ըմբոստանում է. նախ ըմբոստանում է ընկերների դեմ. «Նորեն ֆրանսերեն թերթ, նորեն ֆրանսերեն թատրոն. աստոնց հայերենը չկա: Չպիտի ըլլա որ դուք սանկ մեյ մը ցնցվիք, գիտակցիք մեր վիճակին, չպիտի ըլլա, որ կովիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դեմ...»³¹, ապա՝ օտար միջավայրի և չգտնելով օտարացման ու ուժացման դեմ պայքարի ուղի՝ ցանկանում է մեկնել Հայաստան, նորօրյա հայրենիքի կառուցմանը մասնակցելու, դառնալու նրա մի մասնիկը. «Ռուսական դեսպանատուն է գացեր Լոխում, պահանջելով, որ Հայաստան երթալու համար իրեն անցագիր տան: Մերժեր են: Ըսեր է, թե կուզե իր հայրենիքը ապրիլ. մերժեր են: Ըսեր է, թե կուզե ճահիճներու չորացումին և ջրանցքներու բացումին համար իր բազուկները տանիլ. մերժեր են: Ըսեր է նույնիսկ, թե կուզե Արարատը տեսնել ու շնչել զայն. նորեն մերժեր են»³²:

Շահնուրը սփյուռքահայ գրականության մեջ առաջինն էր, որ իր ստեղծագործության մեջ, հանձին Լոխումի, հնչեցրեց հայրենադարձության թեման՝ որպես հայափրկիչ ու հայամնա յուրօրինակ ծրագիր: Լոխումը փորձում է վերադառնալ

²⁹ Նույն տեղում, էջ 213:

³⁰ Ա ն դ ր ա ն ի կ Լ. Փ ո լ ա տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 118:

³¹ Շ. Շ ա հ ն ու ռ, էջ 156:

³² Նույն տեղում, էջ 158:

Պոլիս՝ մահամերձ մոտ մոտ, սակայն այս անգամ ևս իր առջև փակ են դեսպանատան դռները: Լոխուսը հայտնվում է անելանելի վիճակում. մնալ այլևս չի կարող, չի կարող տեսնել հայրենակիցների օրավուր նահանջը, հեռանալ ևս չի կարող. նրա առջև գոց են Փարիզից դուրս տանող ճանապարհները: Այս վիճակից դուրս գալու ելք չկա, այս ելքի բացակայությունն էլ ավելի է խաթարում նրա ջղագրգիռ վիճակը, որից ժամանակավորապես ազատվելու միայն մի ելք է տեսնում հերոսը՝ հարբեցողություն, թմրամոլություն, որոնք, ի վերջո, դառնում են նրա կործանման պատճառը. Լոխուսը կորցնում է հոգեկան հավասարակշռությունը, կործանվում է ֆիզիկապես:

Շահնուրի վեպը, ազգային լինելով հանդերձ, համամարդկային է. այն պատկերում է 20-ական թվականների փարիզյան կյանքը՝ իր բարդություններով, անբարոյական, դրամատիքական, մարդկային այլազան հարաբերություններով և անբնական ընթացքով: Վեպում կողք կողքի հանդես են գալիս հայեր և ֆրանսիացիներ՝ ստեղծելով ֆրանսիական կյանքի համայնապատկերը: Շահնուրը փորձում է ցույց տալ օտար կյանքի ապականիչ ազդեցությունը ոչ միայն հայի, նաև հենց իր՝ ֆրանսիացու նկարագրի վրա: Որպես ֆրանսիացի հերոսներ՝ վեպում հանդես են գալիս Լեսքյուտը, Կոստանը, Փթիթ Լիզը և դրվագային ևս մի քանի կերպարներ՝ Գին, Գաբին, Թերեզը, որոնք միայն միտված են օտար միջավայրի ընդհանուր ֆոնը բացահայտելուն: Շահնուրի Լեսքյուտն իր վարքով ու բարքով տարբերվում է ֆրանսիացի մյուս հերոսներից և իր ժամանակի մարդն է: «Իրավ ալ կարծես այդ շրջանն են մնացած տիպար մրն էր, – գրում է Շահնուրը, – միշտ մեծ խնամքով հագված, լամբակին ծաղիկ մը, մազերը ներկած, արծաթե կոթով գավազան, ոտքին «կեթո»եր, մատներուն մատանի, բեղերուն օժանելիք (cosmétique): Խիստ հատկանշական դիմագիծ մը ուներ ան և իրապես տարօրինակ մորթի գույն մը: Վավաշոտ շրթունքներ, կանաչորակ աչքեր, որոնք կարծես կեղծ են ու խարդախ, բայց որոնք գիտեն այնքան լավ ծածկվիլ չափազանցված ձեքծեքումի մը տակ»³³: Նա վարպետորեն յուրացրել է գեղապաշտ Փարիզի կյանքի օրենքները, բարքերը, լավ գիտի հեշտ ապրելու, կյանքը վայելելու գաղտնիքները: Լեսքյուտը ճարպիկ է, խարդախ ու ստահակ: Հմտորեն կարողանում է պահից օգտվել և իր ծուղակը գցել նյութական ծանր վիճակում հայտնված սիրունատես աղջիկներին՝ նրանց չնչին գումարով մերկ լուսանկարելով ու այդ լուսանկարները թանկ վաճառելով, և դա դեռ ամենը չէ. նա նրանց ներքաշում է սեռային հարաբերությունների մեջ՝ օգտվելով երկակի, այլևս նրանցից օգուտ չունենալով՝ բախտի քմահաճույքին է թողնում: Լեսքյուտն այն մարդկանցից է, որոնք իրենց դիրքերը չեն զիջում, պատրաստ են ամեն ինչի, անգամ ստորության: Այսպես՝ Նենեթին երբեք չի զիջի Պետրոսին, թեև գիտի, որ Նենեթը սիրում է նրան. Նենեթից դեռ ակնկալիքներ ունի, Նենեթը դեռ պետք է իր հետագա գործարքների համար, և նրան ջանում է Պետրոսի առջև վարկաբեկել:

³³ Նույն տեղում, էջ 38:

Լեւքյուռի հակապատկերն է Կոստանը: Հիսունամյա այս հերոսն օժտված է մարդկային վեհ զօժերով: Նա ժամանակին եղել է Փարիզի հրշեջ գնդի ենթասպա: Ողջ կյանքում աշխատել է բարեխղճորեն, երբեք չի խաբել, չի կորցրել մարդկային դեմքը, միշտ նեցուկ է եղել նրանց, ուլքեր ակնկալել են իր օգնությունը: Այս տարիքում էլ դեռ շարունակում է օգտակար լինել մարդկանց: Ծնողի հոգատարությամբ հետևում է Նենեթին և Պետրոսին, չի ցանկանում, որ նրանք դժբախտ լինեն: Հոգեպես տանջվում է նրանց ամեն մի անհաջողության համար, փորձում է սիրող զույգի ճանապարհին փարոս լինել: Կոստանը կարծես Նենեթի պահապան հրեշտակն է, որը, ավա դ, ի վիճակի չէ դաժան կյանքի ճիրաններից ազատելու:

Վեպում իր բարեմասնություններով հատկապես առանձնանում է Փթիթ Լիզը: Շահնուրը ֆրանսահայ գրողներից առաջինն էր, որ կերտեց ֆրանսուհու դրական կերպար: Վեպի ողջ ընթացքից պարզ էրևում է, որ նա հատուկ համակրանք է տալիս իրենց արդար վաստակով ապրող մարդկանց նկատմամբ: Փթիթ Լիզը արտաքնապես աչքի չի ընկնում: «...տասնութ տարեկան կարուհի մըն է,– գրում է Շահնուրը,– որ ականջներուն կեղծ մարգարիտներեն և շագանակագույն աչքերուն անմեղութենեն զատ ոչ մեկ բացառիկ գեղեցկություն ուներ»³⁴: Ազնիվ, հպարտ ու պարկեշտ մի անձնավորություն է, որ գիտե անկեղծորեն սիրել և երբեք չի բռնանում իր սիրո համար: Ավելին, անկատար տեսնելով իր սերը, հեռանում է, որ ավելորդ հոգս չպատճառի իր Պիերոյին:

Շ. Շահնուրը հայ և ֆրանսիացի հերոսներով կարողացել է պատկերել ֆրանսահայ կյանքը, իրատեսորեն ցույց տվել սփյուռքահայության օրավուր ահագնացող նահանջը՝ փորձելով սթափեցնել աշխարհացիքի հայությանը: «Նահանջը առանց երգի» վեպը հայի վեցդարյա նահանջը, արտագաղթը իր մեջ խտացրած XX դ. համահայկական ցավի ու տառապանքի, ցասման և ընդվզման «Տրտունջքն» է:

РОМАН ШААНА ШАХНУРА “ОТСТУПЛЕНИЕ БЕЗ ПЕСНИ”

АСМИК КАРАГУЛЯН

Р е з ю м е

В романе Шаана Шахнура “Отступление без песни” изображена шестивековая эмиграция армян–отступление, которое в обобщенном виде выражает общеармянскую боль и терпение, ярость и возмущение. Являясь национальным произведением 1920-х годов, роман общечеловеческий, отражающий Париж со своими трудностями и противоречиями, разнообразием человеческих отношений. Роман показывает заботы национальной и общественной жизни армянского Спюрка, труднейшую и длительную борьбу за существование.

³⁴ Նույն տեղում, էջ 52.